21. ՄԱՔՅԻ ԱՊԱՆ

Ստեփանակերտա մին օր Մաքյի ապան կյալիս ա ինում։ Կյամ ա Դըշպուլաղա ճղցներան անց կենում, տեսնում մին Նրկյղեցե մարթ ըրրավը կյամ ա, տեղն էլ շատ դուզ ա ինում, ամմա ինքյը եզներեն հտևում չի, լհա՜ վեր ինքյը եշում ա Մաքյի դայուն, եզները տանում ըն ըրրան պարան տամ քարերեն յրան։ Կղնված-կզնված ետ ա տեռնում, Մաքյի ապուն յրան ճըղղըմ, ասում.—Ա հի՞նչ ըշկավար ըս, աշկ օնիս է՞ քյըեզ, դայի՛։

Մաքյի ապան ետ ա տեռնում տրան ասում.— Հա՛, աշկ օնիմ, պա քյըեզ մնան քոռ չում, վեր էս դուզ տեղս ըրրան պարան տամ։